

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է  
ԵԹՎՊԻ-Ի ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ  
«23» 7.6.49.62 2016թ. ՆԻՍՏՈՒՄ  
ՈՒՇԱԿՈՐ Դ. ՄՈՒՐԱՅԱՆ

**ԵՐԵՎԱՆԻ ԹԱՏՐՈՆԻ և ԿԻՆՈՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ  
ԵՎ ՎԵՐԱՀՄԿՄԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

- 1.1. ԵԹՎՊԻ-ի գիտական խորհրդի որակի ապահովման և վերահսկման մշտական հանձնաժողովը (սյուսիետ՝ հանձնաժողով) իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ԵԹՎՊԻ-ի կանոնադրությանը, ԵԹՎՊԻ-ի ներքին իրավական ակտերին և սույն կանոնակարգին համապատասխան:
- 1.2. ԵԹՎՊԻ-ի որակի ապահովման և վերահսկման հանձնաժողովը ձևավորվում է ԵԹՎՊԻ-ի գիտական խորհրդի կողմից:
- 1.3. Հանձնաժողովի գործունեության նպատակն է կանոնակարգման ոլորտի հարցերի ուսումնասիրումը, նախագծերի պատրաստումը և ԵԹՎՊԻ-ի գիտական խորհրդին դրանց վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը:
- 1.4. Հանձնաժողովն իր իրավասություններին վերաբերող խնդիրները քննարկում է ԵԹՎՊԻ-ի գիտական խորհրդի և/կամ ռեկտորի հանձնարարությամբ՝ ըստ գիտական խորհրդի կողմից հաստատված որակի ապահովման քաղաքականության և ռազմավարության:
- 1.5. Հանձնաժողովը համագործակցում է ԵԹՎՊԻ-ի Որակի ապահովման կենտրոնի հետ, քննարկում և ԵԹՎՊԻ-ի գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացնում Որակի ապահովման կենտրոնի կողմից որակի քաղաքականությանը վերաբերող նախագծերը:
- 1.6. Հանձնաժողովը համակարգում և վերահսկում է ԵԹՎՊԻ-ում իրականացվող որակի ապահովման ողջ գործընթացը:

- 1.7. Հանձնաժողովի գործունեության ժամկետի և կազմի հաստատումը, ինչպես նաև դրանց փոփոխություններն իրականացվում են ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդի կողմից:
- 1.8. Սույն կանոնակարգը հաստատվում է ԵԹԿՊԻ-ի գիտխորհրդի կողմից և ուժի մեջ է մտնում գիտական խորհրդի հաստատման պահից:

## 2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՊԱՏԱԿԸ, ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՑԹՆԵՐԸ

- 2.1. Հանձնաժողովը հանդես է գալիս որպես փորձագիտական և վերահսկողական մարմին՝ գնահատելով որակի ապահովման ընթացակարգերի ու չափանիշների համապատասխանությունը ընդունված չափորոշիչներին:
- 2.2. Նախապատրաստում և գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացնում որակի ապահովման վերաբերյալ կանոնակարգային, ընթացակարգային ու չափորոշիչ փաստաթղթերը:
- 2.3. Մշակում է որակի ապահովման ընթացակարգեր՝ կրթական ծրագրերի հաստատման, ընթացիկ հսկողության գործընթացների համար, հետևում և աջակցում է դրանց իրականացմանը բուհի ստորաբաժանումներում:
- 2.4. Պատասխանատու է ուսումնառության և դասավանդման որակի գնահատմանն առնչվող գործընթացների համակարգման համար:
- 2.5. Պատասխանատու է դասավանդման և ուսումնառության որակի չափման գործիքակազմի ու համակարգված մոտեցումների մշակման համար:
- 2.6. Համակարգում և վերահսկում է ԵԹԿՊԻ-ի որակի ապահովման բոլոր ենթակառույցների ու աշխատախմբերի գործունեությունը՝ նպաստելով որակի շարունակական բարելավմանը և կայունությանը (տե՛ս Հավելված 1):

## 3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

- 3.1 Հանձնաժողովի նախագահը հանդիսանում է բուհի ռեկտորը:
- 3.2 Յուրաքանչյուր ֆակուլտետից հանձնաժողովում ընդգրկվում է մեկական լիազոր ներկայացուցիչ:
- 3.3 Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են դասախոսներ, ուսանողներ, գործատուներ:

#### 4. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Հանձնաժողովի նախագահը.

- 4.1. հրավիրում և վարում է հանձնաժողովի նիստերը,
- 4.2. համակարգում է հանձնաժողովի որոշումների ընդունման գործընթացը,
- 4.3. առանձին հարցերի քննարկման նպատակով հրավիրում է համապատասխան մասնագետների և փորձագետների,
- 4.4. ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդում ներկայացնում է հանձնաժողովի կողմից մշակված նախագծերը, ինչպես նաև որակի ապահովման գործընթացի վերահսկման արդյունքները,
- 4.5. իրականացնում է ԵԹԿՊԻ-ի ներքին իրավական ակտերով և սույն կանոնակարգով նախատեսված այլ լիազորություններ:

#### 5. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՂԱՄՐ

Հանձնաժողովի անդամը.

- 5.1. մասնակցում է հանձնաժողովում բարձրացված հարցերի վերաբերյալ քննարկումներին,
- 5.2. քվեարկությունների միջոցով մասնակցում է որոշումների ընդունմանը,
- 5.3. հանձնաժողովի որոշմամբ ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդում ներկայացնում է հանձնաժողովի կողմից մշակված նախագծերը,
- 5.4. իրականացնում է ԵԹԿՊԻ-ի ներքին իրավական ակտերով և սույն կանոնակարգով իրեն վերապահված այլ լիազորություններ,
- 5.5. հանձնաժողովում քննարկված հարցերի վերաբերյալ հանձնաժողովի անդամը կարող է ունենալ հատուկ կարծիք և այն ներկայացնել ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդի նիստում:
- 5.6. հանձնաժողովի կազմը վերահաստատվում է տարին մեկ անգամ՝ յուրաքանչյուր ուստարվա սկզբում:

## 6. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

- 3.1. Հանձնաժողովի գործունեության իրականացում է համաձայն նրա նախագահի կողմից հաստատված աշխատանքային պլանի:
- 3.2. Հանձնաժողովն իր գործունեությունը կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ ուշ, քան կիսամյակը մեկ անգամ:  
Հանձնաժողովի նիստերը հրավիրում է հանձնաժողովի նախագահը:
- 3.3. Հանձնաժողովի նիստերն իրավագոր են, եթե նրանց մասնակցում է հանձնաժողովի անդամների առնվազն երկու երրորդը: Հանձնաժողովում որոշումներն ընդունվում են հանձնաժողովի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահն ունի վճռորոշ ձայնի իրավունք:
- 3.4. Հանձնաժողովի նիստերն անցկացվում են հանձնաժողովի նախագահի կողմից առաջարկվող օրակարգով:
- 3.5. Հանձնաժողովի նիստերի նախապատրաստումը և արձանագրումը իրականացնում է քարտուղարը:
- 3.6. Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նիստը վարում է նրա կողմից նշանակված հանձնաժողովի անդամը:

Հավելված 1. Որակի ապահովման համակարգի կառուցվածքը ԵԹԿՊԻ-ում

